

Եւ ինչ կը կարծէք, այս օր երեսուն երկու երկար տող բեւեռագիր յանձնեց ներկայ սերունդին, որ Հ. Ալիշանի Այրարատի կարևոր զարգերէն մինն եղաւ:

Չգիտեմ, այդ ժայռն էր հաւատարիմ աւանդապահ թէ նոքա էին հանճարեղ, որ դտան այդ քարը, զիտցան որ հաւատարիմ է, իրենց աւանդը յանձնեցին:

Տեսայ այս բեւեռագրութիւնը, զանձ դտածի պէս ուրախութեամբ այս տեղ վազեցի, երկու ընկերներու օգնութեամբ երկու մեթր վեր բարձրացայ, սանդխի մի աստիճանի լայնքի չափ դէպի ներս կոփուած տեղւոյ վերայ կանգնեցայ, սեպագրութիւններն սկսեցի օրինակել, հազիւ թէ քանի տող օրինակած էի, արեղակի տօթը և աւազակաց երկիւղը, նաև այդ բարձրութեան մէջ մի քիչ լայնութիւն ունեցող աստիճանի վերան կանգնել և այս այն կողմ շարժելն անհնարին լինելով զիս ստիպեցին հեռանալ:

Սեպագրութիւն եղած երեսը ժայռի մէջ դէպի ներս կոփուած է, որ անձրևի ազդեցութենէն զերծ մնայ նա և ճակատէն այս այն կողմ ի վայր առուակներ կոփուած են, որ բարձրից հոտող ջրերն որոց միջով զնան:

ԲԷՕԼԻԻՒՔ ԲԱՇԻ.— Խալեազի մէջ այս զիւղն է բազմաբնակ, այս տեղ կը տեսնուին եկեղեցւոյ և վանքի աւերակներ, նաև պարսպի հետքեր, ունի ընդարձակ հայկական գերեզմանատուն, որոց խաչքարերէն շատերը տարուած են, վերջին տարիներս մի խաչքար ընկաւ մի քրդու վերայ երբ կը տանէր, մնաց տակն տափկացաւ, այժմ թոյլ տուած են, չեն դպչիր երկիւղ կրելով:

Մինչև Հասան խանի պատերազմներու միջոցին ինչպէս ամբողջ Խալեազ՝ նոյնպէս այս զիւղը հայ էին,